ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» ԵՐԿՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Հինգերորդ դարի հայ մեծ մտածող-փիլիսոփա Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկը աչքի է ընկնում ոչ միայն փիլիսոփայական, այլև լեզվական տեսակետից։ Հայտնի է, որ Եզնիկի լեզուն իր կանոնավորությամբ ու գեղեցկությամբ առանձնանում է ոչ միայն ետդասական, այլև դասական շրջանի մյուս երկերի (ինքնուրույն և թարգմանական) լեզուներից։ Լեզվական տեսակետից գրաբարի դասական շրջանի մատենագրության հիմնական առանձնահատկությունն այն է, որ այդ փուլում գրական և խոսակցական լեզուները հիմնականում համընկնում էին[1]։ Դա ամենից շատ վերաբերում է Եզնիկ Կողբացու լեզվին։ Հետագայում գրական և խոսակցական լեզուների միջև եղած տարբերությունները գնալով խորանում են։

Եզնիկի և նրա երկի մասին շատ է գրվել[2]։ Սույն հոդվածում մենք կանդրադառնանք նրա երկի լեզվական մի կողմին՝ հարադրությունների գործածությանը։

Հայտնի է, որ հարադրությունը պետք է կազմված լինի երկու և ավելի բաղադրիչներից, որոնք, գրվելով իրարից անջատ, միասին արտահայտեն մեկ ամբողջական իմաստ։ Հարադրությունների շատ ենք հանդիպում ինչպես դասական, այնպես էլ ետդասական գրաբար մատենագրության մեջ։ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում գործածվել են շուրջ հինգ հարյուր հարադրություններ, որոնք կազմվել են տարբեր կաղապարներով և պատկանում են տարբեր խոսքի մասերի՝ բայեր, մակբայներ, գոյականներ, ածականներ, թվականներ, նախադրություններ, շաղկապներ և եղանակավորող բառեր։ Ըստ որում, ինչպես մյուս մատենագիրների մոտ, այնպես էլ Եզնիկի երկում բայական հարադրությունները գերակշռում են։ Հարադրական կառույցների գրեթե կեսը բայեր են։ Ստորև կքննենք հարադրությունների տեսակներն ըստ խոսքիմասային պատկանելության։

Բայական հարադրությունների քանակը հասնում է 250-ի։ Դրանց բաղադրիչները (կամ դրանցից մեկը) բայեր են, և ամբողջ կառույցը արտա-

---

1 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, 1951, էջ 101, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 35։

2 Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 1-ին, Երևան, 1944, էջ 126—149, В. К. Чалоян, К вопросу об учении Езника Кохбацы, армянского философа V века, Ереван, 1940, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 76—79, Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Արրահամյանի, Երևան, 1970 և այլն։

հայտում է գործողության կամ եղելության իմաստ։ Եղնիկի երկում որպես հարադրությունների գործուն բաղադրիչներ հանդես են եկել հետևյալ բայերը՝ ածել, անկանել, առնել, առնուլ, արկանել, բառնալ, բերել, գալ, գործել, դառնալ, դնել, ելանել, երթալ, ընթանալ, ընկենուլ, թօթափել, լինել, կալ, հանել, հասանել, հարկանել, մատուցանել, մտանել, յարձակել, ունել, պակասել, պահանջել, տալ, տանել։

Ինչպես գրաբարում առհասարակ, այնպես էլ «Եղծ աղանդոցում» մասնավորապես, որպես հարադրությունների բաղադրիչ ամենից բարձր հաճախականություն ունեն առնել, առնուլ, արկանել, դնել, լինել, տալ բայերը[3]։

Առնել-ը հարադրություններ է կազմել ազդ, անեռգ, ամօթ, աշխատ, ապաստան, արժանի, զանց, թափուր, խնդիր, խրատ, յայտ, յայտնի, յաշտ, ուշ, պատասխանի, սուտ, վնաս, տեռագերծ բաղադրիչներով, որոնցից էլ ամենից շատ գործածվել են յաշտ և յայտ բաղադրիչները։

Յաշտ առնեմ նշանակում է «զոհել, զոհ մատուցել, մորթել»։ Դրան իմաստով մոտ է յազեմ համադրական բայը[4]։ Եղնիկը յաշտ առնեմ-ը գործածել է 30, իսկ յազեմ-ը՝ 5 անգամ։ Օրինակ՝ «Բնաւ զի՞նչ իսկ յազէր, զի անասունք չև ևս էին արարեալ» (էջ 119)[5]։ «Զրուան... զհազար ամ յաշտ արար» (էջ 113)։

Իմաստային որոշ նրբերանգներով համանիշներ են յայտնեմ և յայտ առնեմ բայերը, որոնցից առաջինը գործածվել է 16, իսկ երկրորդը՝ 26 անգամ։ Ինչպես՝ «Ծանուցեալ Որմզդի զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արհմանին» (էջ 114)։ «Եւ յայտ արար՝ թէ յիւրոց կամաց եղեւ այնպիսի եսաւ» (էջ 173)։

Լինել բայը հարադրվել է երկու տասնյակից ավելի բաղադրիչների, որոնք պատկանում են տարբեր խոսքի մասերի։ Դրանք են՝ ազգ, այրընտիր, ապաշաւ, արժանի, (յ)ամօթ, բաւական, գեր ի վերոյ, զեղջ, խելամուտ, խնդիր, հետամուտ, մեղադիր, յանդիման, ուրախ, կարող, չունկնդիր, սկիզբն, վնաս և այլն։

Երբեմն հանդիպում ենք միայն հարադրավոր կազմությամբ բայերի կիրառության, ինչպես, օրինակ՝ ապաշաւ լինել (Եղնիկի մոտ ապաշաւեմ չկա).

«Զինն հազար ամն զեղջ և ապաշաւ լինիցի» (էջ 172), այրընտիր լինել (կտրիճները հավաքել), զեղջ լինել (զղջալ), չունկնդիր լինել (չհնազանդվել), յանդիման լինել (հանդիպել, տեսնվել) և այլն։

Դասական շրջանի ինքնուրույն մատենագրության մեջ պատասխանեմ համադրական բայը բոլորովին չի հանդիպում։ Դրան մեկ անգամ հանդիպում ենք Աստվածաշնչում. «Ո՞վ է ոսոխն իմ որ պատասխանեսցէ» (Յովբ., գլ. ԺԳ)։ Ինչպես մյուս երկերում, այնպես էլ «Եղծ աղանդոցում» լայն գործածություն ունեն դրան համանիշ պատասխանի առնեմ և պատասխանի տամ հարադրությունները։ Ըստ որում, Եղնիկը առնել-ը հարադրության կազմում

---

3 Հմմտ. Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 83։

4 Ըստ մոգական օրենքի՝ զոհաբերվող անասունին զանազան արարողություններով կամ շարշարանքներով նախ անզգայացնում էին, որը յազել-ն էր, և ապա մորթում (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 313, Եղնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 239, ծան. 402)։

5 Բնագրային օրինակները Վենետիկյան 1826 թ. հրատարակությունից են։

չորս անդամ գործածել է նախադաս, մեկ անգամ՝ ետադաս։ Օրինակ՝ «Որք ըստ անարժան անմտութեանն՝ և ոչ պատասխանի առնելոյ արժանի են» (էջ 228)։ «Հարկ է տալ պատասխանի, և ցուցանել» (էջ 116)։

Հրաման տամ հարադրությունը Եզնիկը գործածել է միայն նշված շարադասությամբ. ինչպես՝ «Չէ պարտ ոչ թագաւորաց մահու հրաման տալ, և ոչ դատաւորաց քերել և սպանանել զմարդասպանն» (էջ 162)։ Մյուս մատենագիրների մոտ նման օրինաչափություն գոյություն չունի. այսպես, օրինակ՝ Իուղանդը տամ-ը ետադաս շարադասությամբ գործածել է 40, իսկ նախադաս՝ 44 անդամ, Ագաթանգեղոսը համապատասխանաբար՝ 21 և 18 անդամ։

Ինչպես ցույց են տալիս վերոբերյալ օրինակները, բայական հարադրությունների կազմում որպես հարադիր հանդես են գալիս տարբեր խոսքի մասեր, բայց ամենից շատ գոյականներ։ Եզնիկի երկում որպես բայական հարադրության բաղադրիչ գործածվել են ութսուներեք գոյականներ։ Դրանք են՝ ազդ, ակաստան, ակն, ակնարկութիւն, ահ, աղակատանք, աղօթք, անձն, անուն, աշխարհ, աչք, ապաշխարութիւն, ապաստան, արբանեկութիւն, արեգակն, արգել, արև, աւար, բաժ, բակ, բայոց, բուռն, գան, գին, գուն, դատ, դարձ, երեսք, երկիր, երկիւղ, երկրպագութիւն, զղջումն, ընտելութիւն, թողութիւն, ինչք, իշխանութիւն, իրաւունք, խաչ, խաւար, խեղդ, խնդիր, խրատ, ծնունդ, կեանք, համար, համբոյր, հարկ, հնար, հոգի, հրաման, ձեռն, մահ, մեղ(ք), միտ(ք), յաշտ, նշան, ոգի, ողոք, ոտն, ունչ, ուշ, չափ, պաշտօն, պատասխանի, պատիժ, պատուէր, պատուհաս, պէտք, ջատագով, սիրտ, սկիզբն, սպասաւորութիւն, վարձ, վնաս, վրէժ, տեղի, փաշաման, փող, քաղ, քարշ, քծինք, քնին, օգնա[7], *քառասուներեք ածականներ՝* ագատ, ագգի, այրընտիր, անհոգ, աշխատ, ապահով, արժանի, բաւական, բաւանդակ, գար, երկայնամիտ, ընդդէմ, թոյլ, լուսատու, լսելի, խելամուտ, կարող(օղ), կենակից, կերպարանակից, կոխան, հալածական, հակառակ, հանգիստ, հետամուտ, հմուտ, հնազանդ, հուպ, մահապարտ, մասնմուտ, մեղադիր, յայտ, յայտնի, յանդիման, յառաջադէմ, ունկնդիր, ուրախ, չար, չունկնդիր, պատսպարան, սուտ, տարագիր, տեռազեռծ, փախստական, *տասնվեց մակբայներ՝* առաջի, գեր ի վերոյ, զկնի, զհետ, ի բաց, ի դէպ, ի մէջ, ի միջի, ի միջոյ, ի ներքս, ի վայր, ի վեր, ի վերայ, մօտ, յետս, շուրջ, *երկու դերանուն՝* ինքն, միմեանց, *և* անկանել (անկեալ դնիմ), գալ (ի լինել և ի գոյանալ գալ) *բայերը։*

Բայական հարադրությունների քննությունը ցույց է տալիս, որ դրանց կազմում ակտիվ դեր են խաղում ի, ընդ, զ նախդիրները։ Ընդ որում, ավելի հաճախ հանդիպում է ի-ն. այսպես՝ թեք հոլովաձևերի հետ այն գործածվել է 26, իսկ մակբայական կառույցներում (ի բաց, ի մէջ, ի վերայ և այլն)՝ 18 անգամ։ Օրինակ՝ «Այլ յուղղոյն սնանալոյ՝ և ի մտաց իսկ անկանի մարդ»

---

6 Վիճակագրական տվյալները բերում ենք հետևյալ մատենագիրների համաբարբառներից. «Եղնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց» (բնագրային. համաբարբառ), Երևան, 1972, Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց (բնագրային), գիրք 2-րդ, Երևան, 1973, «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց» (բնագրային), գիրք 3-րդ, Երևան, 1976։

7 Առհասարակ որպես հարադիր գործածվում են ինչպես գոյականների, այնպես էլ մյուս հոլովվող բառերի զանազան հոլովաձևերը։

(էջ 180)։ «Լուսին... չանայ յիւրմէ զխոնաւութիւնն ի բաց պարգել» (էջ 186)։ «Մեք զցաւոց և զմահուն բազում ինչ պատճառս ունիմք ճշմարիտ բանիւ ի մէջ բերել» (էջ 71)։ «Վասն այս երկուց պատճառանաց ընդ մաճուամբ անկանիցի» (էջ 75)։ «Խեղդ ընդ անձն անկեալ՝ ձգեն զնոսա ի խորխորատ» (էջ 116)։ «Ոչ ինքեանք զիմանալի ինչ գմտաւ կարացին ածել» (էջ 227)։ «Զանի ճարեալ Ադամայ՝ սկսաւ տակաւ զանձն մեկնել ի հիւղեայն» (էջ 245)։

Եզնիկը մեծ թվով բայական հարադրություններ կազմել է լինել բայով. ինչպես՝ աղդ լինել, այրընտիր լինել, ապաշաւ լինել, արժանի լինել, բաւական լինել, զեղջ լինել, լուսատու լինել, կարող(ող) լինել, խելամուտ լինել, ճետամուտ լինել, մեղադիր լինել, յամօթ լինել, յանդիման լինել, ունկնդիր լինել, ուրախ լինել, չունկնդիր լինել, տարագիր լինել և այլն։ Կան հարադրություններ էլ, որոնք ունեն կրկնակի հարադիրներ. ինչպես՝ գեղջ եւ ապաշաւ լինել, սկիզբն առնուլ լինելոյ, գալ ի ծնունդս եւ յաճումն, գալ ի չափ ճասակի և այլն։

«Ապահով լինել» իմաստը Եզնիկի մոտ արտահայտված է կալ յակաստանի և յապաճովի կալ դարձվածքների միջոցով։ Օրինակ՝ «Եթե այնպիսի զարհուրեցուցիչք չէին՝ ո՞րչափ ևս առաւել չկայր երբէք յակաստանի» (էջ 63)։ «Նախ քան զընտրելն և զգալն զվտանգս չարեաց՝ յապաճովի կայր» (էջ 31)։

Կան հասկացություններ էլ, որոնք արտահայտվում են և՛ համադրությամբ, և՛ հարադրությամբ (կամ հարադրություններով). ինչպես՝ աղօթեմ, որը գործածված է 6 անգամ[8], յաղօթս կամ, մատուցանեմ աղօթս[9]։ «Ցորժամ աղօթեմ՝ ընտրեսս զխորհուրդդ» (էջ 304)։ «Զորմէ և Դաւիթ ի Հոգւոյն սրբոյ ուսեալ, մատուցանէր աղօթս» (էջ 229)։

Եզնիկի երկում լայն գործածություն ունեն միադիմի բայերը. ինչպես՝ անգ է, անկ է, արժան է, ճանոյ է, ճարկ լինի, ճարկ է, մարթ է, շան է, պիտոյ է, պատշաճ է և այլն, որոնք բայական իմաստ արտահայտող յուրահատուկ կապակցություններ են՝ կազմված որևէ խոսքի մասից և եմ կամ լինիմ բայերի երրորդ դեմքից։ Օրինակ՝ «Առ հասարակ արժան էր մեզ և վայելել ի նմա» (էջ 257)։ «Բայց մեզ ճարկ եղեւ... մխել ի խնդիր ճառիցս» (էջ 22)։ «Զէր մարթ անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ» (էջ 100)։

«Եղծ աղանդոցում» հարագիր բայերից հետո գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում մակբայական հարադրությունները, որոնց քանակը հասնում է ութսունվեցի։ Դրանց բաղադրիչները տարբեր խոսքի մասեր են. ինչպես, օրինակ՝ գոյական՝ ամսոյ ամսոյ, աւուր աւուր, երամ երամ, գունդս առ գունդս, բերան ի բերան, ընդ ժամանակս ժամանակս, ի բնէ, ի ծնէ, ի ճարկէ, ի մէջ, ի միջի, ի միջոյ, տիւ և գիշեր, առ ձեռն, առ երես, առ ոտս, առ ժամանակ մի և այլն, ածական՝ այլ ընդ այլոյ, ի բաց, ի գուր, ի միասին. ընդ ճանուր, փոքր ի շատէ և այլն, դերանուն՝ զոր օրինակ, յայնմ ճետէ, թվական՝ ի մի, մի մի, մի անգամ, միոյ միոյ, մակբայ՝ առ յապայ, առ սակաւ, ետ ընդ ետ, ի գլխովին, ամենեին իսկ, բնաւ իսկ և այլն։ Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, մակբայական հարադրությունները

---

8 Վեցն էլ՝ Եզնիկին վերագրվող «Խրատքումս» («Ընդ կայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826, էջ 299—313)։

9 Կորյունը գործածել է զաղօթս առնեմ («Վարք Մաշտոցի», Երևան, 1941, էջ 82), իսկ Բուզանդը՝ աղօթս առնեմ («Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 68) ձևով։

կազմվում են տարբեր սկզբունքներով. տվյալ խոսքի մասի կրկնությամբ՝ ամսոյ ամսոյ, առուր առուր· միոյ միոյ, մանր մանր, որևէ խոսքի մասի և նախդրի դուդորդությամբ՝ գունդս առ գունդս, բերան ի բերան, ի բնէ, ի ծնէ, ի բաց, ի զուր, յայնմ ետեղ, ետ ընդ ետ և այլն, որոնց մեծ մասը առանձին հոլովաձևեր են. հայցական՝ առ երես, առ ձեռն, առ ոտս, բացառական՝ ի բնէ, ի ծնէ, ի վերուստ և այլն։ Օրինակ՝ «Յորս են ազգմունք ինչ բնականք՝ որովք հանդերձելոց իրիք իրաց ազդ լինիցի նոցա. որպէս... աղաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղալոյ» (էջ 174)։ «Ոչ անսայր նմա Ադամ, այլ խորհեալ ի բաց մերժէր» (էջ 245)։ «Զի ամենայն որ արտաքոյ քան զնա աստուած անուանի, չէ նա ի բնէ աստուած» (էջ 270)։ «Մարմինք մահկանացուք ընդ ոգւոցն կենդանեաց վասն է՞ր մկրտիցին» (էջ 293)։

Անգամ բաղադրիչով կազմվել են մի քանի հարադրություններ. ինչպես՝ բազում անգամ, երկրորդ անգամ, մի անգամ, միւս անգամ: Ըստ որում, «կրկին, նորից, դարձյալ» իմաստներն արտահայտվում են դարձեալ համադրական (այն գործածվել է 75 անգամ) և երկրորդ անգամ (գործածվել է 3 անգամ), միւս անգամ (3 անգամ) հարադրական կառուցվածքի մակբայներով։ Օրինակ՝ «Դարձեալ առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն» (էջ 18)։ «Ապա երկրորդ անգամ իջեալ Յեսու կերպարանօք աստուածութեան իւրոյ առ տէրն արարածոց, դնէր դատ ընդ նմա վասն մահուն իւրոյ» (էջ 248)։ «Յորժամ միւս անգամ հանդիպի, ծագէ ի նմա սակաւիկ ինչ ի լուսոյն» (էջ 201)։

«Եղծ աղանդոցում» գործածված հարադրությունների հաջորդ տեսակը անվանական հարադրություններն են, որոնց քանակը հասնում է վեց տասնյակի։ Դրանք կազմված են երկու կամ ավելի գոյական անուններից, կամ գոյականից ու այլ խոսքի մասից և բարդության մեջ արտահայտում են անվանական նոր ընդհանուր իմաստ։ Այսպես՝ ագդեցութիւն բնական||ազդումն բնական—բնազդ, գիրք սուրբ||սուրբ գիրք||աստուածական գիրք||Աստուածատուր գիրք||աստուածեղէն գիրք||Հին եւ նոր կտակարան—Աստվածաշունչ. դեղ մանու—թույն և այլն։ Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, Եղնիկը նույն հասկացության համար երբեմն օգտագործում է մի քանի համանիշ հարադրություններ. այսպես, օրինակ՝ Աստվածաշնչի համար գործածել է չուրջ մեկ տասնյակ, իսկ աստծու համար՝ չուրջ մեկուկես տասնյակ տարբեր հարադրություններ։ Նրա երկում աստված նշանակող հարադրություններն են՝ առաջին մարդ, արարիչ աշխարհի, Հոգի Աստուծոյ, Հոգին սուրբ, հիշմարիտ գառն, Որդի Աստուծոյ, որդի բարձրելոյ, Տէր ամենակալ, Տէր ամենայնի, Տէր Աստուած, Տէր Յիսուս, Աստուած օրինաց և այլն։ Ըստ խոսքիմասային պատկանելության՝ անվանական հարադրությունների բաղադրիչները գոյականներն են (Քանն Աստուած, դեղ մանու), գոյական ու ածական (աստուածական բարքառ, արարիչ աշխարհի), թվական ու գոյական (չորեքին բնութիւնք, չորք բնութիւնք, չորք հիւրք, չորք տարերք)[10]. և այլն։ Օրինակ՝ «Եւ այս ամենայն ագդեցութիւնք բնականք են յանասունսն» (էջ 175)։ «Քանզի

10 Դրանք բնության չորս տարրերի՝ հողի, ջրի, օդի, հրի անվանումներն են (Ա. Ա. Աբրահամյան, Եղնիկ Կողբացու տերմինաբանության մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 71)։

որ մարմնաւոր է՝ ի չորից ճիւթից յօդեալ է» (էջ 91)։ «Զորեթին բնութիւնքն... առանձինն՝ ապականիչք են» (էջ 10)։

Եղնիկի երկում բավական շատ են հարադրական կազմությամբ շաղկապները, որոնց թիվը հասնում է երեսունվեցի։ Դրանք են՝ այլ և, այլ ևս, այնու զի, այս ինքն, ապա եթէ, ապա թէ, ապա թէ ոչ, ապա ուրեմն, բայց եթէ, բայց թէ, բայց միայն, եթէ ոչ, եւ արդ, թէ եւ, թէպէտ եւ, թող թէ, իբրև թէ, իսկ արդ, իսկ եթէ, իսկ թէ, իցէ թե, մանաւանդ զի, մանաւանդ թէ, մինչ զի. մինչ չեւ, նա եւ, ոչ եթէ, ոչ եւս, ոչ թէ, ոչ միայն, որպես զի, որպէս թէ, ուստի եւ, վասն զի, փոխանակ զի, քան թէ: Դրանց միջոցով շաղկապվում են ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասությունները։ Ըստ որում, դրանք գործածվում են և՛ բարդ համադասական, և՛ բարդ ստորադասական նախադասությունների կազմում։ Օրինակ՝ «Եւ մանաւանդ զի առանց արթերն ասէ որ է՝ ն» (էջ 261)։ «Զէ պատճառ չարեաց Աստուած՝ այնու զի առ ընթեր նմա զհիւղն դնեն» (էջ 25)։ «Զի լաւ համարի թէ վասն անուան բարիոք մեռանիցին, քան թէ կենդանի կայցեն և վատանուն լինիցին» (էջ 57)։ Գրաբարում եւ արդ և իսկ արդ հարադրական շաղկապներով սովորաբար սկսվում են պարբերությունները։ Այդպես է նաև Եզնիկի մոտ։ Օրինակ՝ «Եւ արդ զո՞ր ինչ յարարածոցն բարի կարծիցին, կամ զո՞ր չար» (էջ 10)։ «Իսկ արդ եթէ ոչ էր անարար, ասեն, ըստ ձեզ սատանայ... գիտէ՞ր Աստուած» (էջ 54)։

Վերոհիշյալ շաղկապներից մի քանիսն ունեն զուգադիր գործածություն. այսպես՝ ոչ||այլ և, ոչ միայն||այլ և, ոչ||բայց միայն, ոչ||եթէ ոչ, թէ և||ապաքէն, թէպէտ և||այլ, ոչ||թող թէ, իսկ եթէ||ապա, ոչ եթէ||այլ, ոչ միայն||այլ և այլն։ Օրինակ՝ «Եւ ո՛չ միայն յանասունսն են բնական ազդեցութիւնք, այլ և ի մարդկանն» (էջ 175)։ «Զոր թէպէտ և ի մեր լեզու՝ այս չար ասեմք... այլ գիտեմք՝ եթէ այսն հողմ է» (էջ 92)։ «Այլ թէ և բախտ ևս էր... Զրուանն, ապաքէն ուրուք բախտ էր» (էջ 131)։ Իսկ մյուս շաղկապները, ինչպես՝ այնու զի, ապա ուրեմն, եւ արդ, իսկ արդ, մանաւանդ զի, մանաւանդ թէ, որպէս զի, որպէս թէ, ուստի եւ զուգադիր կիրառություն չունեն։ Օրինակ՝ «Ապա ուրեմն է զօրութիւն ինչ ծածուկ» (էջ 11)։ «Կէսք հրաժարեցին բնաւ ի խնդրելոյ, որպէս թէ ամենևին այնմ խնդրոյ չիք սպառուած (էջ 22)։

Գրաբար մատենագրության մեջ լայն կիրառություն ունեն նախադրությունները, որոնք հանդես են գալիս համադրական և վերլուծական ձևով։ Այս տեսակետից բացառություն չի կազմում նաև Եզնիկի «Եղծ աղանդոց» երկը։ Դրանում զգալի տոկոս են կազմում նաև վերլուծական կառուցվածքի նախադրությունները (23 հատ)։ Դրանք են՝ առաւել քան, աւելի քան, արտաքս քան, արտաքոյ քան, առ ընթեր, բայց միայն, դէմ յանդիման, ի ճանդէպ, ի մէջ, ի միջի, ի միջոյ, ի ներքոյ, ի ներքոյ քան, ի պէտս, ի սակս, ի վեր, ի վերայ, ի վերոյ, ի վեր քան, ի տեղ[11], յառաջ քան, յառաջագոյն քան, նախ քան։ Օրինակ՝ «Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին, բայց միայն յայսց կառաց» (էջ 17)։ «Բարիոք է արեգակն... իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ» (էջ 14)։ «Կարի անարժան գործ էր, և ի լուսնոյ ի վեր զամենայն ինչ անմահ համարել» (էջ 223)։ «Նախ քան զպատկերանալն և լինել կենդանի, անմասն էր ի չարեաց» (էջ 31)։

---

11 Ի դեպ, բառս Եզնիկի երկում գործածված է միայն մեկ անգամ և այն էլ՝ այդ ձևով («Տգէտ և անընտրող առաջնորդ... ի սիրոյ տեղ՝ ատելութիւն ցուցանէ», էջ 311)։

Ինչպես մյուս տեսակի հարադրությունների (օրինակ՝ բայական), այնպես էլ վերլուծական նախադրությունների կազմության գործում ակտիվ դեր է խաղում ի նախդիրը։ Եղնիկը դրանով կազմել է շուրջ մեկուկես տասնյակ նախադրություններ. ինչպես՝ ի մէջ, ի միջի, ի միջոյ, ի վերայ, ի սակս, ի աեղ և այլն։ Նախադրությունների հարադրի դերում հանդես են գալիս նաև ֆան, դէմ և այլ բաղադրիչներ. օրինակ՝ առաւել ֆան, դէմ յանդիման և այլն։

Եղնիկը գործածել է նաև հարադրական կազմությամբ դերանուններ, որոնց բանակը հասնում է տասնհինգի։ Դրանք են՝ ամենայն ինչ, ամենայն ոք, այլ իմն, այլ ինչ, այլ ոք, այս ինչ, զինչ ինչ, իւրաքանչիւր ոք, մի ինչ, մի ոք, մի եւ նոյն, ոչ ինչ. ոչ ոք, ո ոք, որ ինչ։ Ագաթանգեղոսի. Բուզանդի և Կորյունի երկերում չենք հանդիպում այլ իմն, այս ինչ, մի ինչ, մի ոք, նոյն եւ մի վերլուծական կառուցվածքի դերանուններին[12], իսկ ամենայն ոք դերանուն ավելի շատ գործածել են Բուզանդն ու Ագաթանգեղոսը, համապատասխանաբար՝ 40 և 12, իսկ Եղնիկը՝ 1 անգամ («Զի զամենայն ոք ի բարւոք ակնկալութենէ վրիպեցուսցէ», էջ 105)։ Բերենք բնագրային մի երկու օրինակ. «Ուստի զամենայն ինչ, որ լինի շար, ոչ բնութեամբ շար գիտեմք» (էջ 50)։ «Անտի իւրաքանչիւր ոք իւրով արուեստիւ զնոյն դրօշէր» (էջ 206)։ «Ո ոք յերկուց որդոցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից» (էջ 115)։

Ածականին, թվականին և եղանակավորող բառերին պատկանող հարադրությունները Եղնիկի երկում ունեն շատ սահմանափակ կիրառություն։ Դրանց համապատասխանաբար հանդիպում ենք երկու, վեց և չորս անգամ։ Հարադրական կազմությամբ ածականներն են՝ ազգի ազգի, այլ եւ այլ. «Եւ այլքն ևս այլոց ազգի ազգի իրաց պատճառք լինին» (էջ 156)։ «Եւ երազոցն այլ եւ այլ պատճառք են» (էջ 177)։

Եղնիկն օգտագործել է ֆսան եւ ինն, հարիւր եւ ֆսան, ինն հարիւր եւ երեսուն, ինն հազար, եւթանասուն հազար, հարիւր եւթանասուն եւ հինգ հազար[13] հարադրական թվականները. «Տէրն արարածոց... այնպէս արկանէր գայր ի գեհեն զամենեսին, մինչեւ ցֆսան և ինն դար» (էջ 246)։ «Յաւուրս Դաւթի՝ եւթանասուն հազար... զօրս եհար հրեշտակ Աստուծոյ» (էջ 151)։

«Եղծ աղանդոցում» գործածված հարադրական եղանակավորող բառերն են՝ մի՛ թէ, նա աւանիկ, նա աւասիկ, ո՞չ ապաքէն։ Օրինակ՝ «Մի՛ թէ զա՞յն ևս կարիցեն ասել՝ թէ մի եւ նոյն աստղ մեծութեան և աղքատութեան կարէ պատճառք լինել» (էջ 161)։ «Նա աւասիկ տեսանեմք զբնութիւնսն միմեանց հակառակս» (էջ 33)։ «Անդ որ ի վեր յերկինս խաւար լինի, ուստի՞ իցէ. ո՞չ ապաքէն յայտ է՝ թէ ուրեք ծածկի ցայգ» (էջ 214)։

Եղնիկի երկում գործածված հարադրական բարդությունների ուսումնասիրությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. «Եղծ աղանդոցում» հարադրությունները շատ լայն կիրառություն ունեն։ Դրանց միջոցով արտահայտվել են իմաստային զանազան նրբերանգներ, և երկի լեզուն դարձել է ավելի հարուստ ու ճկուն։

---

12 Վերջինիս մի եւ նոյն շարադասությամբ մեկ անգամ հանդիպում ենք Բուզանդի երկում («Աստուծոյ Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 69)։

13 Եղնիկի ձեռագրում (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1097) «հարիւր և ութսուն և հինգ հազար» է (տե՛ս նաև Եղնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 226, ծան. 282)։

2. Հարադրությունների կեսը բայեր են, որոնց միջոցով արտահայտվել են ինչպես իմաստային նրբերանգները, այնպես էլ իմաստներ, որոնց արտահայտման համար չկան զուգահեռ համադրական ձևեր։

3. Հարադրական մակրայները գերակշռում են մակրայների մյուս տեսակներին։

4. Ի տարբերություն պատմիչների երկերում գործածված անվանական հարադրությունների, որոնք հիմնականում հատուկ անուններ են (անձնանուններ կամ տեղանուններ), Եզնիկի երկում գործածված վեց տասնյակ անվանական հարադրությունները վերաբերում են Աստվածաշնչին, աստծուն, ընադդին, բնության չորս տարրերին և նման այլ հասկացությունների։

5. Հարադրական ստորադասական շաղկապները, որոնց միջոցով շաղկապվում են գլխավոր և երկրորդական նախադասությունները, գերակշռում են համադասականներին։

6. Մյուս խոսքի մասերին պատկանող հարադրությունները (դերանուն, ածական, թվական, նախադրություն, եղանակավորող բառեր) աչքի չեն ընկնում իրենց հաճախականությամբ։ Բարձր հաճախականություն ունեն դրանց համադրական տեսակները։

7. Եզնիկի երկում կան շուրջ ութ տասնյակ հարադրություններ, ինչպես՝ ազդեցութիւն բնակսն, ազատ առնել, գուն գործել, գաղ ի ֆնին, անկանել ընդ մահուամբ, արբանեկութիւն ճարկանել, ի գար հայել, կալ յակառաանի, շորեքին բնութիւնք, պակասել ի կենաց, պաշտոն առնուլ, պաշտօն ճարկանել, տարագիր լինել, փաշաման կրել և այլն, որոնց չենք հանդիպում գրաբարի դասական շրջանի ինքնուրույն մատենագրության մյուս երկերում։

УПОТРЕБЛЕНИЕ АНАЛИТИЧЕСКИХ СЛОВ В КНИГЕ ЕЗНИКА КОХБАЦИ «ОПРОВЕРЖЕНИЕ СЕКТ»

ГЕВОРК ТОСУНЯН

Резюме

В книге армянского философа V в. Езника Кохбаци «Опровержение сект» использовано почти 500 аналитических слов, придающих своеобразие языку автора. Эти слова образованы по разным моделям и относятся к различным частям речи: существительным, прилагательным, числительным, местоимениям, глаголам, наречиям, союзам, предложным и модальным словам. С помощью аналитических слов выражаются различные смысловые оттенки. Кроме того, есть такие понятия, которые передаются только аналитическим способом, так как для них нет сопоставительных синонимов.

В книге Езника Кохбаци впервые употреблено более 80 аналитических слов, которые не встречаются в других произведениях оригинальной литературы классического периода грабара.